Արձանագրություն N 3

«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ -18/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան

«29» մայիս 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մինասյան
հանձնաժողովի անդամներ՝ Նաիրա Հովհաննիսյան
Նարա Մարգարյան
Անուշ Բախշյան
Լարիսա Հովհաննիսյան
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Արֆարմացիա»ՓԲԸ-ը և « Արմենֆարմ»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեից ստացված հարցման համաձայն «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ 155484 (մեկ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր ութսունչորս) հհ դրամ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է օրենքով նախատեսված ժամկետանց պարտավորությունների շեմը: Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել:

1"1" Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 44-րդ, 45-րդ կետերը հանձնաժողովը որոշեց մերժել «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ի հայտը :

1"2" Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետը հանձնաժողովը որոշեց «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ի տվյալները ՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

1.3. «Արֆարմացիա»ՓԲԸ-ն և «Արմենֆարմ»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.4. Քանի որ № 5-ի համար հայտ էր ներկայացրել միայն «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ն, ուստի հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժնի համար մրցույթը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. **<u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման</u>**

արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Արֆարմացիա»ՓԲԸ-ի և «Արմենֆարմ»ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3. «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ- 18/18» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/18» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում «Արֆարմացիա»ՓԲԸ-ն և «Արմենֆարմ»ՍՊԸ-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

N 3; 4; 10; 11; 12; 13 և 14 չափաբաժինների համար «Արֆարմացիա» **ՓԲԸ-ին**;

N 7; 8 և 9 չափաբաժինների համար **«Արմենֆարմ»ՍՊԸ**-ին;

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

5 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ, հաշվապահություն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Վիրաբ Մանասյան

Անդամ՝ ..... Նաիրա Հովհաննիսյան

..... Նարա Մարգարյան

..... Անուշ Բախշյան

..... Լարիսա Հովհաննիսյան

Քարտուղար՝ ..... Սահականուշ Գրիգորյան